

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԱՅՈՒՆ ԱՌԵՎՏՈՒՐՆ ԱՆԿԱՅՈՒՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

DOI: 10.52174/2579-2989_2024.1-52

Շուշան ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի փորձագետ

2014 թ. ավարտել է ՀՊՏՀ-ն և ընդունվել ասպիրանտուրա: 2016 թ. աշխատանքի է անցել ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնում՝ սկզբում որպես կրտսեր հետազոտող, իսկ 2018 թ.-ից առայսօր՝ որպես փորձագետ: Հեղինակ և համահեղինակ է 9 գիտական աշխատանքների:

https://orcid.org/0000-0001-7669-8626

Հիմնաբառեր. *ռուս-ուկրաինական պատերազմ, պատժամիջոցներ, «գնային առաստաղ», առևտուր, Ռուսաստան*

Այսօր Ռուսաստանն աշխարհում զբաղեցնում է առաջին տեղը երկրի նկատմամբ կիրառվող պատժամիջոցների թվով: Երկու տարվա ընթացքում արևմտյան երկրների կողմից օրեցօր ավելացվող սահմանափակումները նպատակ են հետապնդում Ռուսաստանի տնտեսությունը կտրելու համաշխարհային շուկաներից, տնտեսության քայքայմամբ հասնելու պատերազմի դադարեցմանը:

Պատերազմի մեկնարկից անմիջապես հետո երկրի իշխանությունները կասեցրել են արտաքին առևտրի պարբերական վիճակագրության հրապարակումը՝ տարընթերցումից խուսափելու համար: Հոդվածում փորձ է արվել վերլուծելու վերջին երկու տարիներին Ռուսաստանի արտաքին առևտրային գործունեությունը՝ օգտագործելով գործընկեր երկրների հայելային տվյալները, ինչպես նաև ՌԴ համախմբված պաշտոնական վիճակագրությունը: Պատժամիջոցների հետևանքով Ռուսաստանի տնտեսությունը նկատելի վնասներ է կրել՝ հատկապես հում նավթի և նավթամթերքի էմբարգոյի հետ կապված: Այնուամենայնիվ, դրանք հեռու են արևմտյան երկրների սպասելիքներից: Մի կողմից՝ ռուսական ընկերությունները կարողանում են շրջանցել պատժամիջոցները, մյուս կողմից՝ առևտուրը վերակողմնորոշվում է դեպի «բարեկամ» երկրների շուկաներ:

Փորձնական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ զարգացող երկրներում արտաքին առևտուրը դրական և նշանակալի ազդեցություն ունի տնտեսական աճի, առաջընթացի և աղքատության

հաղթահարման վրա[1]: Դա ապահովում է շուկաների և տեխնոլոգիաների հասանելիությունը, թույլ է տալիս օգտագործել երկրի համեմատական առավելությունները: Փոքր տնտեսություն ունեցող երկրների համար արտաքին առևտուրը նաև արտարժութային հոսքերի կարևոր աղբյուր է:

Թեև վերջին տարիներին համաշխարհային առևտուրը շարունակում է աճել, սակայն տեղի են ունենում արմատական տեղաշարժեր առևտրային հոսքերի ուղղություններում: COVID-19 համավարակի, աշխարհաքաղաքական բախումների՝ ռուս-ուկրաինական պատերազմի, ԱՄՆ-Չինաստան հարաբերությունների լարման համատեքստում, գործարար շրջանակներում լայն տարածում է գտնում, այսպես կոչված, «ֆրենդշորինգը», երբ մատակարարման շղթաները վերաուղղորդվում են դեպի «բարեկամ» երկրներ: Այս մոտեցումը հանգեցնում է առևտրի ֆրագմենտացիայի՝ գլոբալ մատակարարման շղթաների ընդհատման: Այդուհանդերձ, այս գործընթացը չի ենթադրում միջազգային առևտրի հետընթաց: Թեև Առևտրի համաշխարհային կազմակերպության ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ պայմանականորեն տարանջատված երկրների երկու խմբերի՝ արևմտյան (կենտրոնում՝ ԱՄՆ) ու արևելյան (Չինաստան) խմբերի ներսում առևտուրն ավելի արագ է աճում, քան առևտուրն այդ երկրների խմբերի միջև, այնուամենայնիվ, համաշխարհային առևտուրը շարունակում է ընդլայնվել և գլոբալացման հետընթաց տեղի չի ունենում[2]:

2022 թ. փետրվարին սկսված ռուս-ուկրաինական պատերազմը, ապա դրան հաջորդած լայնածավալ պատժամիջոցների կիրառումը Ռուսաստանի դեմ ցնցումներ առաջացրին համաշխարհային առևտրային հոսքերում: 2023 թ. դեկտեմբերի 15-ի դրությամբ ՌԴ-ի նկատմամբ կիրառվել է 18772 պատժամիջոց, որից 16077-ը՝ փետրվարի 22-ից հետո[3]: Դրանք ֆինանսական, լոգիստիկ պատժամիջոցներ են, ինչպես նաև արտաքին առևտրային կարգավորման միջոցառումներ՝ ապրանքների արտահանման և ներմուծման ուղղակի սահմանափակումներ և այլն[4]:

Ներկայում Ռուսաստանն աշխարհում առաջատարն է երկրի նկատմամբ կիրառվող պատժամիջոցների թվով: Մինչ այդ՝ մինչև 2022 թ. փետրվարը, ամենաշատ թվով պատժամիջոցներ կիրառվում էին Իրանի նկատմամբ (4953 պատժամիջոց): Ի պատասխան պատժամիջոցների՝ Ռուսաստանն իր հերթին որոշում ընդունեց դադարեցնելու ավելի քան 200 ապրանքատեսակի արտահանումը[5]:

Համաշխարհային առևտրում Ռուսաստանը կարևոր խաղացողներից է: 2021 թ. այս երկիրը ապրանքների 12-րդ խոշորագույն արտահանողն էր աշխարհում, և նրան էր բաժին ընկնում համաշխարհային արտահանման 2,3%-ը: Երկրի կարևորությունը, առաջին հերթին, դրսևորվում է որպես էներգակիրների գերտերություն: Այսպես՝ Ռուսաստանը հում նավթի երկրորդ, բնական գազի չորրորդ խոշոր արտահանողն է (2021 թ.)[6]: Երկիրը նաև ոսկու, կոբալտի, նիկելի, պլատինի և պղնձի խոշորագույն արտահանողներից է: Բացի բնական ռեսուրսներից, Ռուսաստանը հացահատկի խոշորագույն արտահանողն է աշխարհում:

Գծապատկեր 1-ում ներկայացված է ՌԴ առևտրի շարժընթացը 2012-2022 թթ.: Ակնհայտ է, որ երկիրը մշտապես ունեցել է դրական առևտրային հաշվեկշիռ: Եվ արտահանման, և՛ ներմուծման ամենամեծ անկումը գրանցվել է 2016 թ., երբ արտահանումը կրճատվել է 31%-ով, իսկ

[1] Were, Maureen (2015) "Differential effects of trade on economic growth and investment: A cross-country empirical investigation," Journal of African Trade: Vol. 2: Iss. 1, Article 5. DOI: https://doi.org/10.1016/j.joat.2015.08.002

[2] World Trade Report 2023 — Re-globalization for a secure, inclusive and sustainable future, https://www.wto.org/english/news_e/news23_e/wtr_12sep23_e.htm

[3] World Trade Report 2023 — Re-globalization for a secure, inclusive and sustainable future, https://www.wto.org/english/news_e/news23_e/wtr_12sep23_e.htm

[4] Ушкалова Д. И. (2022). Внешняя торговля России в условиях санкционного давления // Журнал Новой экономической ассоциации. № 3 (55). С. 218–226. DOI: 10.31737/2221-2264-2022-55-3-14

[5] What else does Russia export, beyond oil and gas? (Mar 18, 2022), https://www.weforum.org/agenda/2022/03/russia-gas-oil-exports-sanctions/

[6] Աղբյուրը՝ ՄԱԿ-ի՝ ապրանքների առևտրի վիճակագրական տվյալների բազա, https://comtradeplus.un.org/



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Աղբյուրը՝ ՌԴ ԿԲ

ՌԴ արտաքին առևտուրը, 2012-2022 թթ., մլրդ ԱՄՆ դոլար

ներմուծումը՝ 37%-ով: 2020 թ. արտահանումը կրճատվել է 20%-ով, մինչդեռ ներմուծման ծավալների նշանակալի կրճատում չի եղել՝ -5%: Արտահանման և ներմուծման ամենամեծ աճը գրանցվել է 2021 թ., համապատասխանաբար՝ 48% և 26%: Արտահանումն առավելագույն մակարդակի է հասել 2022 թ. (592 մլրդ ԱՄՆ դոլար)՝ ներմուծման կրճատման համատեքստում ապահովելով առևտրային հաշվեկշռի ռեկորդային դրական հաշվեմնացորդ՝ 315,5 մլրդ ԱՄՆ դոլար:

ՌԴ արտահանումը կախված է էներգակիրներից, քանի որ արտահանման գրեթե կեսը բաժին է ընկնում այդ ապրանքներին[7]: Հում նավթի արտահանման մասնաբաժինը 22% է, նավթամթերքինը՝ 14%, բնական գազինը՝ 11%, հեղուկ բնական գազինը՝ 1%: Այսպիսի կառուցվածքով պայմանավորված՝ արտահանման ծավալների փոփոխությունը կոռելացված է նավթի համաշխարհային գների փոփոխության հետ (գծապատկեր 2):

ՌԴ-ից արտահանումը մշտապես աչքի է ընկել նաև աշխարհագրական կենտրոնացվածության բարձր մակարդակով, մասնավորապես՝ 2021 թ. արտահանման 38,2%-ը բաժին է հասել ԵՄ-ին, 14%-ը՝ Չինաստանին, 5,4%-ը՝ Թուրքիային:

2022 թ. փետրվարից ի վեր արևմտյան



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

ՌԴ արտաքին առևտուրը, 2012-2022 թթ., մլրդ ԱՄՆ դոլար

[7] Экспорт Российской Федерации основных энергетических товаров, https://www.cbr.ru/statistics/macro_itm/svs/export_energy/

երկրների կողմից կիրառվող աննախադեպ ծավալների ֆինանսական և առևտրային սահմանափակումները նպատակ ունեն կտրելու Ռուսաստանի տնտեսությունը համաշխարհային շուկաներից, թուլացնելու այն և այդկերպ նվազեցնելու պատերազմը ֆինանսավորելու հնարավորությունները: Այս առումով, հատկանշական է բարձր տեխնոլոգիական ապրանքների՝ դեպի Ռուսաստան արտահանման արգելքները, որոնք շոշափելի բացասական ազդեցություն ունեցան ՌԴ ներմուծման ծավալների և կառուցվածքի վրա: Պատժամիջոցների նկատմամբ ավելի դիմացկուն գտնվեց երկրի արտահանումը, որը պայմանավորված էր մի շարք հանգամանքներով: Նախ՝ մինչև 2022 թ.-ի վերջը պատժամիջոցները հիմնականում շրջանցում էին նավթային և գազային ոլորտները՝ հաշվի առնելով ԵՄ կախվածությունը ռուսական էներգակիրների, հատկապես՝ գազի ներմուծումից: Թեև ԱՄՆ-ն և Ավստրալիան 2022 թ. մարտին հրաժարվեցին ռուսական էներգակիրների ներմուծումից, այնուամենայնիվ, դրա ազդեցությունը մեծ չէր, քանի որ այս երկրների հետ առևուրը մեծ ծավալների չէր հասնում: Դրական ազդեցություն ունեցան նաև հում նավթի բարձր համաշխարհային գները: Բացի այդ, Ռուսաստանը կարողացավ ապրանքների իրացման նոր շուկաներ գտնել արևելյան «բարեկամ» երկրներում՝ Չինաստան, Հնդկաստան և այլն:

2022 թ. սեպտեմբերին Մեծ յոթնյակի երկրները «գնային առաստաղ» (հում նավթի մեկ բարելի համար՝ 60 ԱՄՆ դոլար) սահմանեցին ռուսական հում նավթի և նավթամթերքի համար: Ռուսական արտահանմանն ամենամեծ հարվածը հասցվեց 2022 թ. դեկտեմբերին, երբ Եվրոպական միությունը և Մեծ Բրիտանիան կիրառեցին էմբարգո ծովով ռուսական հում նավթի ներմուծման, այնուհետև՝ 2023 թ. փետրվարին, վերամշակված նավթային արտադրանքի նկատմամբ[8]: Ռուսաստանը մեծապես կախված է Մեծ յոթնյակի երկրներին պատկանող և նրանց կողմից ապահովագրված նավերից: Հետազոտությունները ցույց են տվել, որ այս սխեմայի կիրառման արդյունքում 2023 թվականին Ռուսաստանն ունեցել է արտահանման եկամուտների 34 մլրդ եվրոյի կորուստ, որից 32 մլրդ-ը պայմանավորված է նավթի համաշխարհային և ռուսական նավթի գների տարբերությամբ, մյուս 2 մլրդ-ը՝ արտահանման ծավալների նվազմամբ[9]: Այնուամենայնիվ, սա այն արդյունքը չէ, որ ակնկալում էին արևմտյան երկրները: Սահմանափակումները շրջանցվել են մի քանի տարբերակներով: Օրինակ՝ Հնդկաստանը գնում է ռուսական նավթը, վերամշակում և վաճառում դա՝ առանց սահմանափա-



ԳԾԱՊԱՏԿԵՐ 3

Աղբյուրը՝ Ռուսաստանի Դաշնության կենտրոնական բանկ

ՌԴ առևտրի շարժընթացը, 2021-2023 թթ., մլրդ ԱՄՆ դոլար

[8] Tracking the impacts of G7 & EU's sanctions on Russian oil, https://energyandcleanair.org/russia-sanction-tracker/

[9] One year of sanctions: Russia's oil export revenues cut by EUR 34 bn, https://energyandcleanair.org/publication/one-year-of-sanctions-russias-oil-export-revenues-cut-by-eur-34-bn/

ԱՂՅՈՒՍԱԿ 1

ՌԴ արտահանման ապրանքային կառուցվածքը[10]

	2021 թ.		2022 թ.		2023 թ. հունվար-նոյեմբեր	
	Ծավալը, մլրդ ԱՄՆ դոլար	Մասնաբաժինը, %	Ծավալը, մլրդ ԱՄՆ դոլար	Մասնաբաժինը, %	Ծավալը, մլրդ ԱՄՆ դոլար	Մասնաբաժինը, %
Ընդամենը	493.1		591.4		385.9	
Հանքահումքային արտադրանք	277.3	56%	390.4	66%	235.3	61%
Մետաղներ և դրանցից պատրաստված արտադրանքներ	82.6	17%	70.7	12%	55.4	14%
Քիմիական արդյունաբերության արտադրանք, կաուչուկ	37.8	8%	42.0	7%	24.9	6%
Պարենային ապրանքներ և գյուղատնտեսական հումք (բացի տեքստիլից)	36.0	7%	41.3	7%	39.4	10%
Մեքենաներ, սարքավորումներ, տրանսպորտային միջոցներ և այլ ապրանքներ	29.3	6%	23.5	4%	20.1	5%
Փայտանյութ և թղթե արտադրանք	17.0	3%	14.1	2%	9.1	2%
Տեքստիլ, տեքստիլ արտադրանք և կոշիկ	1.7	0%	1.9	0%	1.5	0%
Կաշի, մորթի և դրանցից պատրաստված արտադրանք	0.2	0%	0.2	0%	0.1	0%

կումների: Մյուս կողմից՝ ռուսական նավթը փոխադրվում է, այսպես կոչված, «ստվերային նավերով», որոնք չունեն արևմտյան երկրների գրանցում: Դրա արդյունքում ռուսական նավթը գրեթե չի վաճառվում «գնային առաստաղից» ցածր գնով[11]: Ուշագրավ է, որ նավթի համաշխարհային և ռուսական գների միջև տարբերությունը կայուն նվազել է 2023 թ.-ի ընթացքում:

Ռուսաստանի Դաշնության դաշնային մաքսային ծառայությունը 2022 թ. ապրիլին կասեցրել է մաքսային վիճակագրության պարբերական հրապարակումը՝ «ոչ ճշգրիտ գնահատականներից խուսափելու համար»[12]: Որոշակի դադարից հետո ներկայացվել է արտաքին առևտրի համախմբված վիճակագրություն 2023 թ. հունվար-հոկտեմբերի համար:

Գծապատկեր 3-ում ներկայացված է ՌԴ արտահանման ու ներմուծման շարժընթացը՝ եռամսյակային կտրվածքով: Ինչպես արդեն նշվեց, 2022 թ. արտահանման ծավալները ռեկորդային բարձր էին: Դրան նպաստել էին նավթի համաշխարհային բարձր գները, ապրանքների գների աճը, պատժամիջոցների՝ էներգակիրների արտահանման վրա չտարածվելը, ինչպես նաև դեպի Չինաստան արտահանման ծավալների աննախադեպ աճը: «Գնային առաստաղի» և ռուսական նավթի էմբարգոյի սահմանումը հանգեցրին 2023 թ. առաջին եռամսյակում 2022 թ. չորրորդ եռամսյակի նկատմամբ 27% անկման, որից հետո արտահանումն աստիճանաբար վերականգնվեց: Ինչ վերաբերում է ներմուծմանը, ապա, չնայած նշանակալի անկմանը, 2022 թ. երկրորդ և 2023 թ. առաջին եռամսյակներում (համապատասխանաբար՝ 18,7% և 20,4%), 2023 թ. վերջին դա վերականգնվել է մինչև 2021 թ. մակարդակը:

Ռուսական արտահանման կառուցվածքում ավելացել է հանքահումքային արտադրանքի մասնաբաժինը՝ 2021 թ. 56%-ից 2022 թ. հասնելով 66%-ի, այնուհետև 2023 թ. հունվար-նոյեմբերին նվազել

[10] Աղբյուրը՝ Ռուսաստանի Դաշնության կենտրոնական բանկ, https://www.cbr.ru//

[11] Almost no Russian oil is sold below $60 cap, say western officials, https://www.ft.com/content/09e8ee14-a665-4644-8ec5-5972070463ad

[12] ФТС раскрыла объем внешней торговли России в 2023 году, https://www.rbc.ru/economics/14/11/2023/65532b479a79471209aab87e

ԱՂՅՈՒՍԱԿ 2

ՌԴ ներմուծման կառուցվածքի փոփոխությունը[13]

	2021 թ.		2022 թ.		2023 թ. հունվար-նոյեմբեր	
	Ծավալը, մլրդ ԱՄՆ դոլար	Մասնաբաժինը, %	Ծավալը, մլրդ ԱՄՆ դոլար	Մասնաբաժինը, %	Ծավալը, մլրդ ԱՄՆ դոլար	Մասնաբաժինը, %
Ընդամենը	293.5		259.1		259.0	
Մեքենաներ, սարքավորումներ, տրանսպորտային միջոցներ և այլ ապրանքներ	144.8	49%	118	46%	131.7	51%
Քիմիական արդյունաբերության արտադրանք, կաուչուկ	53.8	18%	57	22%	51.0	20%
Պարենային ապրանքներ և գյուղատնտեսական հումք (բացի տեքստիլից)	34	12%	35.7	14%	32.0	12%
Մետաղներ և դրանցից պատրաստված արտադրանք	21.5	7%	19.1	7%	17.5	7%
Տեքստիլ, տեքստիլ արտադրանք և կոշիկ	17	6%	15.8	6%	17.5	7%
Հանքահումքային արտադրանք	5.6	2%	5.2	2%	5.2	2%
Փայտանյութ և թղթե արտադրանք	4.1	1%	3.9	2%	3.1	1%
Կաշի, մորթի և դրանցից պատրաստված արտադրանք	1.3	0%	1	0%	1.1	0%

մինչև 61%: Որոշակիորեն ավելացել է նաև պարենային և գյուղատնտեսական ապրանքների արտահանման մասնաբաժինը՝ 2021 թ. 7%-ից մինչև 10%՝ 2023 թ. հունվար-նոյեմբերին: Դրա հետ մեկտեղ, նվազել են մետաղական և քիմիական արդյունաբերության արտադրանքի ծավալներն ու մասնաբաժինն արտահանման կառուցվածքում:

Ներմուծման կառուցվածքում ամենամեծ մասնաբաժինն ունեն մեքենաները և սարքավորումները, որոնք էլ հենց արևմտյան երկրների պատժամիջոցների նշանակետում են: 2022 թ. գրանցվել է վերոնշյալ ապրանքների ներմուծման անկում, որից հետո՝ 2023 թ. հունվար-նոյեմբերին, գրեթե վերականգնվել է մինչպատերազմյան մակարդակը:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 4

ՌԴ արտահանման փոփոխությունը, 2022 թ.՝ 2021 թ.-ի նկատմամբ, մլրդ ԱՄՆ դոլար[14]

[13] Աղբյուրը՝ Ռուսաստանի Դաշնության կենտրոնական բանկ, https://www.cbr.ru/
[14] Աղբյուրը՝ ՄԱԿ-ի՝ ապրանքների առևտրի վիճակագրական տվյալների բազա, https://comtradeplus.un.org/

Հաշվի առնելով զարգացած երկրների կողմից բարձր տեխնոլոգիական ապրանքների արտահանման նկատմամբ սահմանափակումների կիրառումը՝ կարելի է ենթադրել, որ դրանք ձեռք են բերվում այլ երկրներից: Հետպատերազմյան ժամանակաշրջանում չեն հրապարակվում ՌԴ արտաքին առևտրի տվյալներն ըստ երկրների, ուստի, մենք օգտագործել ենք հայելային տվյալներ, որոնք հրապարակվել են գործընկեր երկրների կողմից: Այլ կերպ ասած, այլ երկրի կողմից դեպի ՌԴ արտահանումը դիտարկվել է որպես այդ երկրից ՌԴ ներմուծում:

Գծապատկեր 4-ից պարզ է դառնում, որ 2022 թ. Ռուսաստանից արտահանումն ուղղվել է դեպի Արևելքի «բարեկամ» երկրների շուկաներ՝ Չինաստան, Հնդկաստան և Թուրքիա: Հատկանշական է այն հանգամանքը, որ 25,4 մլրդ ԱՄՆ դոլարով ավելացել է նաև դեպի ԵՄ արտահանումը, ինչը, թերևս, պայմանավորված է ԵՄ մի շարք երկրների՝ ռուսական էներգակիրների ներմուծումից կախվածությամբ և այդ տարում էներկագիրների առևտրի նկատմամբ պատժամիջոցներ չկիրառելով: Կարելի է ենթադրել, որ իրավիճակը փոխվել է 2023 թ., երբ կիրառվեցին պատժամիջոցներ ռուսական հում նավթի և նավթամքերքի արտահանման նկատմամբ: Սակայն, 2023 թ. վերաբերյալ տվյալներ դեռևս առկա չեն:

Այլ է իրավիճակը Եվրոպական միությունից ներմուծման պարագայում: Վերջինիս ծավալները շեշտակիորեն՝ 46 մլրդ ԱՄՆ դոլարով կամ 45,2%-ով նվազել են: Նշանակալիորեն պակասել են նաև ԱՄՆ-ից, Հարավային Կորեայից, Ճապոնիայից և Ուկրաինայից ներկրման ծավալները: Զարգացած երկրներից ներմուծման կրճատումը փորձ է արվել փոխհատուցելու Չինաստանից, Թուրքիայից, Ղազախստանից և Հայաստանից ներմուծման ավելացմամբ: Հայաստանից Ռուսաստան արտահանումն ավելացել է գրեթե 2 անգամ՝ 793,9 մլն ԱՄՆ դոլարից մինչև 2,4 մլրդ ԱՄՆ դոլար:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ 2022 թ. ռուս-ուկրաինական պատերազմի համատեքստում Ռուսաստանի նկատմամբ կիրառվող առևտրային սահմանափակումները նշանակալի վնաս են հասցրել երկրի տնտեսությանը: Առավել մեծ ազդեցություն են ունեցել ՌԴ նավթային արտահանման և բարձր տեխնոլոգիական ապրանքների ներմուծման նկատմամբ սահմանափակումները: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ դրանք չեն ապահովել այն արդյունքը, որ ակնկալում էին արևմտյան երկրները: Ռուսաստանի տնտեսությունը բարձր դիմացկունություն է ցուցաբերում՝ դեպի արևելյան երկրների շուկաներ արտահանման կողմնորոշմամբ, հաճախ նաև պատժամիջոցները շրջանցող տարբեր կառուցակարգերի կիրառմամբ:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 4

ՌԴ ներմուծման փոփոխությունը, 2022 թ.՝ 2021-ի նկատմամբ, մլրդ ԱՄՆ դոլար[15]

[15] Աղբյուրը՝ ՄԱԿ-ի՝ ապրանքների առևտրի վիճակագրական տվյալների բազա, https://comtradeplus.un.org/

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Экспорт Российской Федерации основных энергетических товаров, https://www.cbr.ru/statistics/macro_itm/svs/export_energy/
2. Ушкалова Д. И. (2022). Внешняя торговля России в условиях санкционного давления // Журнал Новой экономической ассоциации. № 3 (55). С. 218–226. DOI: 10.31737/2221-2264-2022-55-3-14
3. ФТС раскрыла объем внешней торговли России в 2023 году, https://www.rbc.ru/economics/14/11/2023/65532b479a79471209aab87e
4. Almost no Russian oil is sold below $60 cap, say western officials, https://www.ft.com/content/09e8ee14-a665-4644-8ec5-5972070463ad
5. One year of sanctions: Russia's oil export revenues cut by EUR 34 bn, https://energyandcleanair.org/publication/one-year-of-sanctions-russias-oil-export-revenues-cut-by-eur-34-bn/
6. Tracking the impacts of G7 & EU's sanctions on Russian oil, https://energyandcleanair.org/russia-sanction-tracker/
7. Were, Maureen (2015) "Differential effects of trade on economic growth and investment: A cross-country empirical investigation," Journal of African Trade: Vol. 2: Iss. 1, Article 5. DOI: https://doi.org/10.1016/j.joat.2015.08.002
8. World Trade Report 2023 — Re-globalization for a secure, inclusive and sustainable future, https://www.wto.org/english/news_e/news23_e/wtr_12sep23_e.htm
9. What else does Russia export, beyond oil and gas? (Mar 18, 2022), https://www.weforum.org/agenda/2022/03/russia-gas-oil-exports-sanctions/

Шушан МОВСИСЯН
Эксперт исследовательского центра «Амберд», АГЭУ

ГЕОЭКОНОМИЧЕСКАЯ ХРОНИКА

УСТОЙЧИВАЯ ТОРГОВЛЯ РОССИИ В НЕУСТОЙЧИВОМ МИРЕ

В настоящее время Россия занимает первое место в мире по числу наложенных на страну санкций. За последние два года увеличивающееся количество ограничений, введенных западными странами, направлено на изоляцию российской экономики от мировых рынков с целью окончания войны путем нанесения экономических ударов.

Сразу после начала войны власти страны прекратили регулярную публикацию статистики внешней торговли с целью избежания некорректных оценок и спекуляций. В статье была предпринята попытка проанализировать внешнеторговую деятельность России за последние два года, используя зеркальные данные от стран-партнеров, а также агрегированную официальную статистику Российской Федерации. В результате санкций российская экономика испытала заметное снижение, особенно после введения эмбарго на сырую нефть и нефтепродукты в 2023 году. Однако они далеки от ожиданий западных стран. С одной стороны, российские компании находят способы обойти санкции, с другой стороны, торговля также смещается в сторону рынков "дружественных" стран.

Ключевые слова: *российско-украинская война, санкции, потолок цен, торговля, Россия*

Shushan MOVSISYAN
Expert at "Amberd" Research Center, ASUE

GEOECONOMIC CHRONICLE

STABLE TRADE OF RUSSIA IN AN UNSTABLE WORLD

Currently, Russia holds the top position globally in terms of the number of sanctions imposed on the country. Over the past two years, the increasing number of restrictions imposed by Western countries has been aimed at isolating the Russian economy from global markets, with the intention of ending the war by causing economic hardship.

Immediately after the start of the war, the country's authorities ceased regular publication of foreign trade statistics to avoid inaccurate assessments and speculation. The paper , attempted to analyze Russia's foreign trade activity over the past two years using mirror data from partner countries, as well as aggregated official statistics from the Russian Federation. Due to the sanctions, the Russian economy experienced notable declines, especially following the embargo placed on crude oil and petroleum products in 2023. Yet, they are far from the expectations of Western countries. On the one hand, Russian companies find ways to circumvent the sanctions, on the other hand, trade also shifts towards markets of "friendly" countries.

Keywords: *Russian-Ukrainian war, sanctions, price cap, trade, Russia*